Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

«Вопросы истории» *ամսագրի 1961 թվականի № 11-ում Գ. Գ. Ալահվերդովը Գ. Գալոյանի «Սոցիալիստական ռևոլյուցիան Անդրկովկասում բուրժուական պատմագրության լուսաբանմամբ» աշխատությունը[1] նվիրված իր գրախոսության վերջում եզրակացնում է. «Ամբողջությամբ դա հարկավոր, օգտակար աշխատություն է։ Ցանկալի է, որ Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի պատմության բուրժուական կեղծարարություններ մերկացնելու գործում հեղինակի առաջին փորձը այդ ասպարեզում հետագա աշխատանքի սկիզբ դնի»։ Եվ ահա ամսագրի այդ համարի (ու տվյալ գրախոսության) հրապարակ գալու հետ միաժամանակ լույս է տեսնում Գ. Գալոյանի նոր աշխատությունը[2], որտեղ հեղինակը առաջին քայլն է կատարում նշված պահանջը իրագործելու ուղղությամբ։*

Գրախոսվող աշխատության մեջ Գ. Գալոյանը ըստ էության շարունակում և զարգացնում է իր նախորդ գրքում սկսած աշխատանքը։ Նա այդ կատարում է հիմնականում երեք ուղղությամբ. ընդարձակում է քննարկվող հարցի ժամանակաշրջանը, բարձրացնում մի քանի նոր պրոբլեմներ, և ավելի լայնորեն է լուսաբանում անցյալում քննարկված մի շարք պրոբլեմներ։

Ռուսերեն հրատարակությունն ընդգրկում է 1917—1921 թվականները, ուր մերկացվում է բուրժուական պատմագիտության կեղծարարությունն Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակի և ամրապնդման համար մղվող պայքարի հարցերում։ Նոր աշխատության մեջ հեղինակը անդրադառնում է նաև Անդրկովկասում կոմունիստական շինարարության պատմությունը կեղծելու բուրժուական պատմագիտության փորձերին։ Այսպիսով, եթե առաջին գրքում բուն նյութը ավարտվում էր 1921 թ. դեպքերով, իսկ հետագա ժամանակաշրջանի հարցերի բուրժուական կեղծարարության մասին միայն համառոտ ձևով նշվում էր եզրափակման մեջ, ապա նոր աշխատությունում պատմության շարադրանքը հասցվում է մինչև մեր օրերը։ Այդ նպատակին են ծառայում գրքի 10-րդ՝ «Անդրկովկասում Սովետական իշխանության ամրապնդման և Անդրֆեդերացիայի պատմության կեղծարարության դեմ» և 11-րդ՝ «Սոցիալիզմի մեծ նվաճումները ծուռ հայելու մեջ» գլուխները։ Դրանից բացի, ներկա աշխատության մեջ կան «Ժամանակակից բուրժուական պատմագիտության սնանկությունը», «Բուրժուական պատմաբանները կեղծում են Բաքվի կոմունայի պատմությունը», «Մայիսյան ապստամբության պատմության խեղաթյուրումը բուրժուական գրականության մեջ» նոր գլուխները, իսկ 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի բուրժուական մեկնաբանումների քննադատությունը և այլ հարցեր ներկայացված են ավելի հանգամանորեն։

Գրքի առաջին գլխում հեղինակը ընդհանուր գծերով տալիս է ժամանակակից բուրժուական ռեակցիոն պատմագիտության ընդհանուր վիճակը, որը մինչև վերջը, հետևողականորեն ծառայում է բուրժուական հասարակարգին։ Իմպերիալիզմի դիրքերը գնալով ավելի ու ավելի են թուլանում, նա ստիպված է քայլ առ քայլ զիջել բարձրացող և հաղթանակող նոր սոցիալիստական հասարակարգին։ Եվ, դրան համապատասխան, բուրժուական պատմագիտությունն ապրում է իր խոր սնանկացումը։ Մեռնող իմպերիալիզմը հոգևարքի մեջ է,—գրում է հեղինակը։ Դրանից իմպերիալիզմի գաղափարախոսների հարձակումները Կոմունիստական պարտիայի, Սովետական իշխանության ու սովետական մարդկանց հասցեին գնալով ավելի կատաղի ու խորամանկ են դառնում։ Կապիտալիստական աշխարհում սոցիալիստական ռևոլյուցիաների ու սոցիալիզմի հաղթանակի պատմության բուրժուական կեղծարարությունը դառնում է մոդա։ Քանի որ փաստերը, ճշմարիտ տրամաբանությունը, գիտական ամենաթույլ, բայց աղնիվ դատողություններն անգամ խոսում են միայն հզոր զարգացման բնապատմական պրոցեսի՝ հզոր սոցիալիզմի, ուստի՝ իմպերիալիզմին ապասարկու գրչակներին մնում է միայն դիմել կեղծիքի միջոցին։ Եվ բուրժուական աշխարհում՝ առաջին հերթին ՍՄՆ-ում, Անգլիայում և այլ երկրներում, հրապարակվում են բազմաթիվ գրքեր, որոնց մեջ կեղծիքը ելակետ է, մեթոդ՝ սովետական հասարակության և սոցիալիստական մյուս երկրների պատմությունը ընթերցողներին ներկայացնելու համար։

---

[1] Г. А. Галоян, Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии. М., 1960, 218 стр.

[2] *Գ. Ա. Գալոյան, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, Հայպետհրատ, 1961, 405 էջ։*

Սովետական պատմաբանները չեն կարող անտարբերությամբ անցնել այն փաստի կողքով, որ բուրժուական ռեակցիոն պատմաբանները ահավոր կերպով խեղաթյուրում են պատմական փաստերը, այլանդակում պատմական ճշմարտությունը։

Գ. Գալոյանին հաջողվել է իր ներկա աշխատությամբ մերկացնել բուրժուական կեղծիքը Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի և կոմունիստական շինարարության պատմության նկատմամբ։ Նա ամենասուր քննադատության է ենթարկում ամերիկացի պրոֆեսորներ Ստենլի Փեյջի, Սեմյուել Հենդելի, մի շարք այլ ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ինչպես նաև արտասահմանյան հայ ռեակցիոն պատմաբանների աշխատություններում, թերթերում և ամսագրերում տպագրված նյութերը, պետական և քաղաքական գործիչների հուշերը, որոնք առնչվում են քննարկվող հարցի հետ։

Մեզ թվում է, որ ավելի լավ կլիներ, եթե գրքի առաջին գլխում հեղինակը հակիրճ ցույց տար, թե ինչպես անցյալում բուրժուական պատմագիտությունը ունեցել է առաջադիմական տրադիցիաներ, իսկ այսօր բացահայտորեն ծառայում է բուրժուական ռեակցիային, գրկվել է վաղեմի գիտականության ամենատարրական հատկանիշներից։ Այս միտքը հեղինակի մոտ կա, իհարկե, միայն թե կրում է անցողիկ բնույթ, չի խորացված։ Խոսելով վաղ շրջանի բուրժուական պատմաբանների մասին, կբացահայտվեր մի կարևոր հանդամանք. թեև նրանք տուրք են տվել պատմության նկատմամբ իդեալիստական մոտեցմանը, հանգել են ֆատալիզմի, ֆետիշացրել են մեծ անհատներին, բայց երբեք այս աստիճան չեն կեղծել պատմական փաստերը, չեն հորինել այդպիսիք ու զրպարտությունն իրենց դրոշը դարձրել, ինչպես այդ անում են ժամանակակից բուրժուական ռեակցիոն պատմաբանները, որոնք շատ են սիրում գիտության անունից հանդես գալ, ներկայացնել «գիտական» պահանջներ։ Ուստի, նրանց ստեղծագործության ընդհանուր մեթոդոլոգիայի վերլուծությունը, թեկուզ և համառոտ գծերով, իր հերթին կնպաստեր պատմության ժամանակակից բուրժուական կեղծարարության մերկացմանը։

Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության բուրժուական կեղծարարների մի մասը անցյալում երկրամասում իրենց հաշիվների մեջ ձախողված և կործանված մարդիկ են։ Նրանք իրենց սեփական կաշվի վրա զգացել են բուրժուական կարգերը վերացնելու նպատակին ուղղված սոցիալիստական ռևոլյուցիայի անխորտակելի ուժը։ Դրանք երկրամասի նախկին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների այն գործիչներն են, կամ նրանց շահերն արտահայտող հեղինակները, որոնք տարիներ շարունակ աղմկում էին, իսկ ոմանք այդպես են վարվում նաև մինչև օրս, սոցիալիստական ռևոլյուցիայի դեմ. թերթերում գրում էին հոդվածներ, հրատարակում էին գրքեր ու գրքույկներ՝ գովերգելով բուրժուական կարգերը և վատաբանելով նոր սոցիալիստական պետական և հասարակական սիստեմը։ Նրանց այդ գործը այժմ նպաստում է Սովետական Միության և սոցիալիզմի լագերի դեմ թշնամաբար տրամադրված իմպերիալիստական շրջաններին, որոնք աճեցնում են պատմաբան-կեղծարարների նոր կադրեր և պահում, ֆինանսավորում են նրանց միայն մի նպատակով, այն է՝ խեղաթյուրել սոցիալիստական ռևոլյուցիաների փաստերը, ծուռ հայելու մեջ ցույց տալ սոցիալիզմի պատմությունը։

Այդ դիտավորությունը հասցրել է այն բանին, որ բուրժուական պատմաբանները փորձում են ցույց տալ, որ Մեծ Հոկտեմբերի հաղթանակից հետո երկրամասում իրենց կողմից իշխանությունը զավթելը բնական և օրինաչափ պրոցես էր, իսկ Սովետական իշխանության հաղթանակը՝ անբնական, անօրինաչափ պրոցես։

Գ. Գալոյանն իր աշխատության մեծագույն մասը՝ ութ գլուխները, նվիրում է այդ կեղծրքի մերկացմանը։ Նա համոզիչ կերպով հերքում է բուրժուական կեղծարարների այն պնդումները, թե Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի ժամանակաշրջանում Անդրկովկասում չկար ռևոլյուցիոն սիտուացիա, ուստի ավելորդ է խոսել այնտեղ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի օրինաչափ լինելու մասին։ Տարբեր են ռեակցիոներների փաստարկները։ Ոմանք շեշտը դնում են այն բանի վրա, որ երկրամասի հասարակական խավերի մեջ բավական զգալի մաս էր կազմում մանր բուրժուազիան, իսկ պրոլետարիատը մեծամասնություն չէր, մյուսները փորձում են բացառել Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների գոյությունը և այլն, և այլն։

Գ. Գալոյանը բուրժուական կեղծարարությունը մերկացնելու համար նախ և առաջ վկայակոչում է փաստերը, ընդգծելով, որ ժամանակակից բուրժուական ռեակցիոն պատմագիտությանը շատ բնորոշ է հայտարարություններ և ընդհանուր դատողություններ անելը, փաստերից խուսափելը։ Սովետական պատմաբանը կարիք չունի փաստերից խուսափելու։ Ընդհակառակը, նրա համար փաստերը և միայն փաստերն են ճշմարտությունը ցույց տալու զենքը։ Գ. Գալոյանը ցույց է տալիս, որ դեռ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ և ռևոլյուցիայի հաղթանակի ժա-

մանակաշրջանում Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում աշխատավորները ամենահամառ պայքար էին մղում բուրժուական դասակարգերի ու պարտիաների դեմ։ Հոկտեմբերից հետո նրանք ոչ մի բոպե չդադարեցրին իրենց պայքարը և հաղթանակեցին. երկրամասում հաստատվեց Սովետական իշխանություն։

Եթե սովետական պատմաբանների բազմաթիվ աշխատություններում Անդրկովկասում 1917—1920 թվականների ռևոլյուցիոն շարժումների պատմությունը ներկայացվում է միայն պատմական ճշմարտությունը վեր հանելու, դեպքերն ու դեմքերը գնահատելու համար, ապա Գ. Գալոյանը այդ անում է գլխավորապես բուրժուական կեղծիքը մերկացնելու համար։

Գրախոսվող աշխատության մեջ առանձնապես պատշաճ կերպով բացահայտված են պատմական երեք կարևոր տարեթվեր. 1920 թվականի ապրիլի 28-ը և նոյեմբերի 29-ը և 1921 թվականի փետրվարի 25-ը։ Դաշնակները, վրաց մենշևիկներն ու մուսավաթականները ամեն միջոց գործի են դրել նսեմացնելու այդ օրերի պատմական նշանակությունը։ Գ. Գալոյանը ցույց է տալիս մի շարք աղբյուրներ, որոնց հեղինակները կաշվից դուրս են գալիս ցույց տալու համար, որ սոցիալիստական ռևոլյուցիան Անդրկովկասում արտահանվել է Սովետական Ռուսաստանից, որ այն չի բխում երկրամասի սոցիալ-տնտեսական դրությունից և հակադիր է աշխատավորների շահերին։ Հայտնի է, որ դա սովետական պատմաբանների կողմից վաղուց բացահայտված և մերկացված կեղծիք է, փաստերի վաղուց հաղթահարված և դեն շպրտված խեղաթյուրում։ Ուստի Գ. Գալոյանը հնարավորին չափ աշխատում է չկրկնել կատարված աշխատանքը և հրապարակ է հանում մի շարք նոր փաստեր, կատարում ինքնուրույն և հետաքրքիր վերլուծություններ՝ պատմական այնպիսի կարևոր իրադարձությունների բուրժուական կեղծիքը մերկացնելու կապակցությամբ, որպիսիք են Բաքվի հերոսական կոմունան, 1920 թ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, բազմաթիվ ռևոլյուցիոն ելույթները Վրաստանում և այլն։ Դրանք անվիճելի վկաներն են ժողովրդի ռևոլյուցիոն տրամադրության, Սովետական իշխանության հաղթանակի համար նրա մղած պայքարի հարուստ պատմության պանծալի էջերը։ Ժողովրդական մասսաների այդ հերոսական պայքարի պատմության դեմ բուրժուական կեղծարարների հարձակումները հանգամանորեն մերկացնելու համար հեղինակը միանգամայն ճիշտ է վարվել, ի լրացումն իր գրքի ռուսերեն հրատարակության, հայերեն աշխատության մեջ ավելացնելով «Բուրժուական պատմաբանները կեղծում են Բաքվի կոմունայի պատմությունը» և «Մայիսյան ապստամբության պատմության խեղաթյուրումը բուրժուական գրականության մեջ» գլուխները։

Տասնամյակներ առաջ՝ 1917—1920 թվականներին, երբ Անդրկովկասի աշխատավորների դրությունը ծանր էր, Սովետական Ռուսաստանի կառավարությունը, նրա ղեկավար Վ. Ի. Լենին։ իրենց պատրաստակամությունն էին հայտնում օգնելու Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորներին նյութապես, դիվանագիտական ճանապարհով՝ ապահովելու համար նրանց խաղաղ կյանքը հարևան տերությունների հետ, ետ վանելու միջազգային ռեակցիայի ոտնձգությունները երկրամասում։ Բայց այդ ժամանակ Անդրկովկասում տիրող բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները իրենց հակաժողովրդական քաղաքականությամբ մերժում էին Սովետական Ռուսաստանի առաջարկությունները։ Դրանից տուժում էր աշխատավոր ժողովուրդը։ Այդ ամենը, իհարկե, ժամանակակից բուրժուական ռեակցիոն պատմաբանները լավ գիտեն։ Բայց եթե անցյալում ամերիկյան իմպերիալիստները խանգարում էին, որ Անդրկովկասում կիրառվի ժողովրդի շահերը ճշմարտացիորեն արտահայտող քաղաքականություն, այսօր նրանք խանգարում են այն բանին, որ հրապարակվի ճշմարտությունը այդ պատմական օրերի մասին։ Եվ դրա փոխարեն ամերիկյան ռեակցիոն պատմաբանները ստեղծում են կեղծ վերսիաներ Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականության մասին։ Դա նույնպես որոշակի նպատակ է հետապնդում. ցույց տալ, որ իբր Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը դեմ էր Անդրկովկասի աշխատավորների շահերին և այդպիսով դարձյալ խեղաթյուրել վերոհիշյալ երեք պատմական տարեթվերի հետ կապված ճշմարտությունը։

Իր աշխատության 7-րդ գլխում Գ. Գալոյանը փաստերի անառարկելի ուժով ցույց է տալիս Սովետական Ռուսաստանի, անձամբ Վ. Ի. Լենինի մեծ ու անգնահատելի դերը երկրամասի աշխատավորների ազատագրության գործում։ Այդ կապակցությամբ նա վկայակոչում է և՛ հրապարակված գրականության պարունակած համապատասխան փաստաթղթերը, և՛ արխիվային նյութերը։ Իրենց թարմությամբ առանձնապես հետաքրքիր են այն նյութերը, որոնք լուսաբանում են 1918—1921 թվականներին ՌՍՖՍՌ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի գործունեությունը՝ կապված անդրկովկասյան իրադարձությունների հետ։ Գիտական շրջանառության մեջ դնելով այդ փաստաթղթերը և գիտականորեն վերլուծելով դրանք, Գ. Գալոյանը բացահայտում է բուրժուական պատմաբանների այն մեքենայությունները, որոնց նպատակն է ցույց տալ, թե

իրր Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիան արտահանվել է, որ Սովետական իշխանությունը իրր թե բռնի ուժով է պարտադրվել երկրամասի աշխատավորներին։ Կեղծարարության ամենագորեղ միջոցներն անդամ ի վիճակի չեն հերքելու այն փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպես Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի աշխատավորները այլևս տանել չէին կարող բուրժուա-նացիոնալիստական կառավարություններին և այլևս ոչ մի ուժ ի վիճակի չէր կանգնեցնել նրանց հաղթական ապստամբությունները։

Աշխատության մեջ բացահայտված է պատմության բուրժուական կեղծարարության մի հատկանշական կողմը ևս, այն է՝ մշտական ձգտումը խնամքով թաքցնելու օտարերկրյա ինտերվենցիան Անդրկովկասում։ Եվ դա արվում է հետևողականորեն։ Ստացվում է այնպես, որ իրր ո՛չ 1917 թվականին, ո՛չ 1918—1920 թվականներին, ո՛չ 1921 թվականի քաղաքացիական կռիվների շրջանում Անդրկովկասում միջազգային իմպերիալիստական ռեակցիան չի միջամտել երկրի ներքին գործերին և իր կամքը թելադրել տեղական բուրժուական նացիոնալիստներին։

Գ. Գալոյանի ներկա աշխատությունն աչքի է ընկնում այդ կեղծիքը մերկացնող փաստերի ու պատմական վկայությունների առատությամբ։ Ըստ որում նյութերի մի մասը հեղինակը վերցրել է օտար աղբյուրներից, որոնց հեղինակները հենց ինտերվենցիայի հեղինակներն են կամ նրանց գործակիցները։

Շարունակելով խնամքով սքողել իրենց տերերի ամեն մի հակաժողովրդական արարքը, բուրժուական ռեակցիոներները փորձում են թաքցնել նաև 1921 թվականին Հայաստանում իրենց հակասովետական զինված ելույթի ավանտյուրիստական, հակաժողովրդական էությունը։ Մասնավորապես դաշնակցական մամուլը իր ուժերից դուրս է գալիս արդարացնելու համար ժողովրդի դեմ ուղղված այդ հերթական դաշնակցական ավանտյուրան։ Տխրահռչակ Ս. Վրացյանը և իր համախոհները տասնամյակներ շարունակ չեն ուզում հասկանալ իրենց գործի ամբողջ վնասակարությունը Հայաստանի աշխատավորության համար։ Եվ դրախոսվող աշխատության հեղինակը ճիշտ է վարվել նրանց զրպարտություններին հակադրելով բազմաթիվ այն փաստերը, որոնք ցույց են տալիս քաղաքացիական կռիվներում դաշնակցական ավանտյուրիստների դեմ հայ աշխատավորների անձնուրաց կռվի անսասան կամքը։ Ավանտյուրան սկսվելու պահից՝ 1921 թվականի փետրվարի 18-ից Սովետական Հայաստանի բանվորները ու գյուղացիները, հայրենասեր ինտելիգենցիան ոտքի ելան կրծքով պաշտպանելու իրենց հարազատ Սովետական իշխանությունը։ Եվ ավանտյուրան լիկվիդացվեց, սերունդներին թողնելով դաշնակցականների հակաժողովրդական գործողությունների մասին ամենադառն հուշը։

Անցան տասնամյակներ։ Անդրկովկասում ժողովրդի բոլոր թշնամիների համար անհավատալի կերպով հաստատ մնաց Սովետական իշխանությունը։ Կառուցվեց սոցիալիզմ։ Կյանքն առաջ գնաց։ Բարգավաճեց տնտեսությունն ու կուլտուրան։ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում բարեկարգվեցին նախկին քաղաքները ու գյուղերը, կառուցվեցին նոր քաղաքներ ու բարեկարգ բանվորական ավաններ։

Թվում է, թե ամեն ոք պետք է ընդունակություն ունենար ըմբռնելու կատարվածի իմաստը, հասկանալու, որ Անդրկովկասի Սովետական ռեսպուբլիկաները կանգնելով Հոկտեմբերի ուղու վրա, ճիշտ վարվեցին, և այդ է նրանց մեծ վերելքի գլխավոր պատճառը։

Բայց այդ ասված է, համենայն դեպս, ո՛չ արտասահմանի այն պատմաբանների ու ժուռնալիստների մասին, որոնք իրենց մասնագիտությունն են դարձրել ճշմարտությունը կեղծելը։ Երևանը կառուցվում է, Բաքուն ու Թբիլիսին զարգացած մեծ ճանապարհով են ընթանում, բարգավաճում է ողջ Անդրկովկասը, իսկ նրանք աչք են փակում այդ ամենի առաջ և հին երգն են երգում։ Սկզբում նրանք զրպարտեցին Անդրֆեդերացիային, կուրորեն փորձեցին վարկաբեկել ժողովուրդների եղբայրական դաշինքի այդ մեծ ակտը։ Հետո բռնեցին Անդրկովկասում ձեռք բերված հաջողությունները ժխտելու ուղին։ Գ. Գալոյանը այդ ամենը բացահայտում է աշխատության վերջին երկու գլուխներում։

Վերջին՝ «Սոցիալիզմի մեծ նվաճումները ծուռ հայելու մեջ» գլուխը, մյուսների համեմատ ավելի սեղմ է ու հակիրճ։ Իսկապես, հարկ կար այդ հարցի վրա ավելի մանրամասն կանգ առնելու։ Կարծում ենք, գործն ավելի կշահեր, եթե բուրժուական կեղծարարների զրպարտությունները մերկացնելու հետ մեկտեղ ցույց տրվեր, թե կապիտալի տիրապետության տակ այժմ ինչպիսի ծանր պայմանների մեջ են գտնվում Անդրկովկասից դաղթած աշխատավորները։ Դրան հակադրելով սովետական աշխատավորների կյանքի պայմանները, հեղինակը ավելի ցայտուն կդարձներ իր միտքը պատմական ճշմարտության մասին։ Այդ պահանջը աշխատության մեջ մասամբ կատարված է նրանով, որ հեղինակը վկայակոչում է արտասահմանյան երկրներից վերջին տարիներին Անդրկովկաս այցելած տուրիստների, պետական ու հասարակական ականավոր դոր-

ծիշների կարծիքները՝ Սովետական Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մասին։ Ըստ որում գլխավորապես ներկայացված են Սովետական Հայաստանի մասին արտահայտած կարծիքները։ Այդ էջերը կարդացվում են մեծ հուզմունքով։ Ահա անգլիական գրող Ջեմս Օլդրիջի կարծիքը. «Ինձ թվում է, որ եթե այսօր հայ լինեի, խորապես հպարտ կլինեի և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով։ Մի՞թե չափազանցություն կլիներ ասել, թե արդի Սովետական Հայաստանն արդեն բռնել է գեղեցիկ ու կուլտուրական մի երկիր ստեղծելու ճանապարհը, որին ձգտել է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը» (էջ 397)։

Հետաքրքիր են այս էջերը, համոզիչ։ Լավ կլիներ, եթե հեղինակը բուրժուական կեղծարարներին մերկացնելիս ավելի հաճախ դիմեր արտասահմանի պրոգրեսիվ գործիչների, բուն աշխատավորական զանգվածների կարծիքին։ Մինչդեռ նա առաջադեմ պատմաբանների աշխատությունների վերլուծությամբ չի զբաղվում։ Ճիշտ է, թերևս այդ դուրս է նրա խնդրի շրջանակներից, բայց և այնպես հարցը բոլորովին անտեսել չի կարելի։ Հենց արտասահմանի այն երկրներում, ուր հանդես են գալիս հեղինակի քննադատած ռեակցիոն աշխատությունները, լույս են տեսնում նաև ճշմարտությունն ապացուցող, Սովետական Միության հաջողություններն աղնվորեն ցույց տվող ոչ քիչ թվով գրքեր, որոնք հենց տեղում մերկացնում են բուրժուական կեղծարարներին։

Ամբողջությամբ վերցրած Գ. Գալոյանի «Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ» աշխատությունը արժեքավոր գիտական ուսումնասիրություն է և արժանի է ընթերցողների ու հետազոտողների լուրջ ուշադրությանը։

Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ